

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՅՈԹԱՆԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ*

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ

Փարիզ

Սիրելի Սրբազան,

Գոհությունն՝ բարյաց պարգևատու Աստուծույն, որ սիրով ընդառաջելով Մեզի եղած խնդրանքին, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն Ձերդ Սրբազնության միջոցավ Մեր հայրական ողջույնը և օրհնությունը կբերեն Հայկական բարեգործական ընդհանուր միության, անոր յոթանասնամյա հոբելինական հանդիսությանց երջանիկ առիթով, որոնք տեղի կունենան Ձեր հովանավորության ներքո ամսույս երկրորդ կեսին Ջվիցերիոյ մեջ:

Յոթանասուն տարիները որոնք անցան, փոթորկալից ու բախտորոշ եղան մեր ազգին համար: Մեր դարու առաջին տասնամյակի հուսադրիչ և խանդավառ օրերուն, հաջորդեցին ողբերգական իրադարձություններ և համատարած բնաջնջումը ամբողջ արևմտահայության, բայց ապա հրաշքի պես՝ պատմության հորիզոնին վրա բացվեցավ վերածնունդի նոր շրջան մը, արդի Հայաստանի պետականության սկզբնավորությամբ և սփյուռքի հայկական գաղութներու կազմավորումով՝ եկեղեցական, մշակութային և ազգային-հայրենասիրական բազմակողմանի ծավալուն գործունեությամբ:

Մխիթարված սրտով պետք է հաստատենք իրողությունը, թե նախախնամական եղավ 1906-ին հիմնադրությունը Հ. Բ. Ը. Միության, գրեթե ճիշտ այն պահուն, երբ սկիզբ պիտի առներ մեր պատմության ամենափոթորկալից և բախտորոշ շրջանը, երբ դժբախտ ճակատագրեն զարնված, նահատակվող մեր ժողովուրդը այնքան կարիք պիտի ունենար փրկարար ձեռ-

---

* Հունիսի 18-ին և 19-ին Լոզանում, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի հովանավորության ներքո ու նախագահությամբ Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ տիար Ալեքս Մանուկյանի տեղի է ունեցել **համաեվրոպահայ պատգամավորական համագումար և Հ. Բ. Ը. Միության 70-ամյակին (1906—1976) նվիրված հանդիսավոր տոնակատարություն:**

Հանդիսության ընթացքում ընթերցվել է Հայոց Հայրապետի սույն նամակը՝ Հ. Բ. Ը. Միության 70-ամյակի առիթով գրված:

քերու: Այդ ծանր օրերուն, Հ. Բ. Ը. Միությունը հավատարիմ իր հիմնադիրներուն ուխտին, միշտ ու ամեն տեղ այդ փրկարար ձեռքը հանդիսացավ:

Մահասփյուռ փոթորիկը անցնելէ հետո, նույն ուխտով ոգեշնչված, բարի գործի նվիրված այս մեծ կազմակերպությունը իր ուժերը լարեց, նվիրվելով նորաստեղծ հայրենիքի օգնության գործին և սփյուռքի տարածքի վրա՝ եկեղեցական, կրթական ու մշակութային հայապահպանման շինարար աշխատանքին:

Այսօր, Հ. Բ. Ը. Միությունը իր յոթանասուն տարիներու մեծ վաստակի սեմին, կրնա արդար հպարտությամբ ուրախանալ իր անցյալ ու այժմու իրագործումներով, այն հաստատ վստահությամբ, թե իրեն վերապահված է շարունակել իր ազգապահպան առաքելությունը նաև մեր օրերու և ապագայի պայմաններուն մեջ, միշտ նույն ոգեշնչումով, միշտ նույն վճռականությամբ, միշտ նույն լավատեսությամբ, ամեն բանե վեր դավանելով անվնաս ու անաղարտ պահպանումը պանդուխտ մեր ժողովուրդին, անոր հավատքին, անոր մայր լեզվին ու ազգային մշակույթին, անոր հայրենաբաղձ սուրբ զգացումներուն:

Հայ մնալ, հայ ապրիլ կնշանակէ մարդկային ոգեկանության վավերական ձևերեն մեկը իրականացնել աշխարհի քաղաքակրթության հորիզոնին վրա, զի հայ ժողովուրդի հոգևոր ու մշակութային ժառանգությունը համամարդկային ինքնատիպ արժեքներեն մին կհանդիսանա:

Հավատարիմ մնալ այդ ժառանգության, կնշանակէ հայկական ազգային ձևերու մեջ համամարդկայինը ապրիլ ու զարգացնել՝ ոգեկանության բարձր մակարդակի մը վրա:

Մենք և մեր ամբողջ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, երջանիկ ենք այս օրերուն, որ մեր աստանդական ժողովուրդի գոյատևման պայքարի ճամբուն վրա, Հ. Բ. Ը. Միությունը բարձրորեն գիտակից է իր պատմական կոչումին, շնորհիվ այն պայծառ անձնավորությանց, որոնց ձեռքին մեջ կգտնվի այսօր, ղեկը այս մեծ կազմակերպության, ի գլուխ ունենալով իր մեծանուն նախագահը՝ տիար Ալեքս Մանուկյան, որու անունը անջնջելի տառերով արձանագրված պիտի մնա մեր դարու սփյուռքի հայության տարեգրությանց մեջ, ոչ միայն իբրև մեծագույն ազգային բարերար, այլ նաև իբրև հայ մարդու տեսիլք ու ապրում ունեցող իմաստուն և եռանդուն առաջնորդ:

Օրհնություն Հ. Բ. Ը. Միության հիմնադիր՝ լուսաբնակ Պողոս Նուպարին և իր գաղափարակից ընկերներուն:

Օրհնություն Հ. Բ. Ը. Միության յոթանասուն տարիներու ժողովրդանվեր ու ազգաշեն վաստակին:

Օրհնություն Հ. Բ. Ը. Միության մեր օրերու հայապահպան առաքելության, այդ առաքելության նվիրված անոր անմոռանալի նախագահին ու կեդրոնական և շրջանային վարչությանց բոլոր ազնիվ ու անձնվեր անդամներուն:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
1-ը հունիսի 1976 թ.